ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄ-ՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/4

ք. Մեղրի «11» օգոստոսի 2020թ.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքը», ի դեմս համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանի, որը գործում է օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ազատ Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 159897000 (մեկ հարյուր հիսունինը միլիոն ութ հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամ, որից 26649500 (քսանվեց միլիոն վեց հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում

վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեղրիի համայնքապետարան	«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2	Սյունիքի մարզ, ք.Մեղրի,Գործարանային 89
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 900302350021	Հ/Հ 2470200016540000
Հ/Հ 900302000204	ՀԿՀՀ 09700228
ՀԿՀՀ 09425378	
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան	Տնօրեն՝ Ա. Գասպարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 11 » օգոստոսի 2020 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ծավալաթերթ-նախահաշիվ/Գլուխ 1/Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Աբովյան-Թումանյան փողոցների խաչմերուկից

hh	Աշխատանքների անվանում	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը* (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
I	**Քանդման աշխատանքներ**				
1	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում և հանձնում սեփականատիրոջը	գծմ	520,0	1,26	655,20
2	Գոյություն ունեցող մայթի ծածկի քանդում h=15սմ, բաձում ավտոմեքենաների վրա	մ³	151,4	1,04	157,40
3	Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի քանդում էքսկավատորով (1,0մ³)h=36սմ, բարձում ավտոմեքենաների վրա	մ³	914,04	1,04	950,60
4	Շին աղբի տեղափոխում լցակույտ 5կմ	տոն	2130,78	0,65	1385,01
	1.Ընդամենը /հազ. դրամ/				**3148,21**
	1.Ընդամենը(%)			**3,87**	
II	**Հողային աշխատանքներ**				
1	10ե IV գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով լիցք 50մ	մ³	80,0	0,48	38,40
2	Բնահողի խտացում գլդոնով 25տոն քաշով 6 անցումով 1 հետքի վրայով,ջրումով	մ³	80,0	0,63	50,40
3	Ավելորդ 10եIV գրունտի մշակում և բարձում էքսկավատորով(1,0մ3) ա/ինքնաթափի վրա	մ³	20,0	0,78	15,60
4	Ավելորդ կարգի բնահողի տեղափոխում լցակույտ 5,0կմ	տոն	39,0	0,65	25,35
	2.Ընդամենը /հազ. դրամ/				**129,75**
	2.Ընդամենը(%)			**0,16**	
III	**Ծածկի կոնստրուկցիան**				
1	Ավազակոպճային շերտ h=10 սմ	մ²	2539,0	0,57	1447,23
2	Չափազատված խճային շերտի իրականացում h=16սմ	մ²	2539,0	2,25	5712,75
3	Բիտումի տարածում 4,12տ/1000մ2	տոն	10,46	316,08	3306,41
4	Ծածկի ներքին շերտի իրականացում խոշորհատիկ ա /բետոնով h=6սմ	մ²	2539,0	6,31	16021,09
5	Ծածկի վերին շերտի իրականացում մանրահատիկ ա /բետոնով h=4սմ	մ²	2539,0	4,68	11882,52
	3.Ընդամենը /հազ. դրամ/				**38370,00**
	3.Ընդամենը(%)			**47,22**	
IV	**Ուղիներ մուտքեր**				
1	Խճային շերտի պատրաստում h=12սմ հաստությամբ	մ²	770,0	1,77	1362,90

2	Բիտումի տարածում 4,12տ/1000մ²	տոն	3,17	314,42	997,47
3	Միաշերտ տաք ա/բետոնե ծածկի իրականացում h=5սմ	մ²	770,0	5,72	4404,40
4	Ավազակոպճային հիմքի իրականացում h=10սմ	մ²	2,48	6,36	15,74
5	Մետաղական խողովակի տեղադրում d=325x5մմ	գծմ	55,0	30,72	1689,60
6	Գլխամասի միաձույլ իրանի պատրաստում B20 դասի բետոնից	մ³	4,0	115,54	462,16
7	d=325մմ խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով /49գծ. մ/	մ²	50,0	1,78	89,00
8	Մետ. խողովակի գլխամասի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	15,0	1,19	17,85
	4.Ընդամենը /հազ. դրամ/				**9039,12**
	4.Ընդամենը(%)			**11,12**	
V	**Մայթեր**				
1	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	1009,0	0,65	655,85
2	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ²	1009,0	3,62	3652,58
3	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ	գծմ	520,0	15,66	8143,20
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20 սմ B20/225 գծ. մ/	մ³	4,50	70,27	316,22
	5.Ընդամենը /հազ. դրամ/				**12767,85**
	5.Ընդամենը(%)			**15,71**	
VI	**Սիզամարգեր**				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ	գծմ	520,0	15,66	8143,20
2	Բուսահողի տեղափոխում 5կմ հեռավորությունից	մ³	122,7	0,78	95,71
3	Բուսահողի փռում ձեռքով h-15սմ հաստությամբ, սիզամարգերի տեղադրում սերմի ցանումով	մ²	818,0	0,74	605,32
	6.Ընդամենը /հազ. դրամ/				**8844,23**
	6.Ընդամենը(%)			**10,88**	
VII	**Բետոնե վաքեր**				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	14,63	6,93	101,35
2	Հավաքովի բետոնե վաքերի տեղադրում (34x30սմ) , 225գծմ	հատ	75	59,94	4495,50
3	Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	283,50	1,19	337,37
4	Մետաղական ցանցի տեղադրում	տոն	4,762	203,85	970,73
5	անկյունակ L=50x50x5մմ/1.697տոն	գծմ	450,1	2,63	1183,85
6	Ամրան A 500c	տոն	3,066	440,4	1350,27
	7.Ընդամենը /հազ. դրամ/				**8439,07**
	7.Ընդամենը(%)			**10,39**	
VIII	**Դիտահորեր 4 հատ**				
1	Դիտահորի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-15 դասի բետոնից (բարձրացում -4 հատ)	մ³	0,64	78,25	50,08
	8.Ընդամենը /հազ. դրամ/				**50,08**
	8.Ընդամենը(%)			**0,06**	
	Ճանապարհի կահավորում				
1	**Նշաններ/10/հատ**				
	Առավելության	հատ	10	44,86	448,60
2	**Գծանշում**				

	Երթևեկելի մասի գծանշում ընդհատված գծով (1:3) 0.10մ-1.5	կմ	0,281	54,0	15,17
	9.Ընդամենը /հազ. դրամ/				**463,77**
	9.Ընդամենը(%)			**0,57**	
	Ընդհանուրը ըստ գլուխ 1-ի(հազ.դրամ)*				**81252,1**
	Ընդհանուրը ըստ գլուխ 1-ի(%)			**100,0**	

Ծավալաթերթ-նախահաշիվ/Գլուխ 2/
Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գ.Նժդեհի փողոցը Ազատամարտիկներ փողոցին կապող հատվածի ասֆալտապատում, հատված ԿՄ0+000 - ԿՄ0+216

hh	Աշխատանքների անվանում	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը* (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
I	**Քանդման աշխատանքներ**				
1	Գոյություն ունեցող քայքայված ա/բետոնե ծածկի քանդում էքսկավատորով (1,0մ³)	մ³	561,0	1,04	583,44
2	Գոյություն ունեցող բետոնե եզրաքարերի քանդում 15x30սմ/18.18մ³/	գծ. մ	404,0	1,26	509,04
3	Գոյություն ունեցող մայթի ծածկի քանդում h-15սմ /խճային հիմքով/	մ³	93,60	1,04	97,34
4	Շին աղբի տեղափոխում լցակույտ 5կմ	տոն	1345,56	0,65	874,61
	1.Ընդամենը /հազ. դրամ/				**2064,44**
	1.Ընդամենը(%)			**5,12**	
II	**Հողային աշխատանքներ**				
1	10ե IV գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ	մ³	10,0	0,48	4,80
2	Բնահողի խտացում գլդոնով 25տոն քաշով 6 անցումով 1 հետքի վրայով,ջրումով	մ³	10	0,63	6,30
4	Ավելորդ 10եIV գրունտի մշակում և բարձում էքսկավատորով(1,0մ3) ա/ինքնաթափի վրա	մ³	90	0,78	70,20
5	Տեղափոխում լցակույտ 5կմ	տոն	175,5	0,65	114,08
6	Հողային պաստառի համահարթեցում գրեյդերով	մ²	1565,0	0,02	31,30
	2.Ընդամենը /հազ. դրամ/				**226,68**
	2.Ընդամենը(%)			**0,56**	
III	**Ծածկի կոնստրուկցիան**				
1	Ավազակոպճային շերտի իրականացում h=10սմ	մ²	1565,0	0,57	892,05
2	Չափազատված խճային շերտի իրականացում h=16սմ	մ²	1565,0	2,25	3521,25
3	Բիտումի լցաբաշխում 4.12տոն /1000մ²	տոն	6,45	316,08	2038,02
4	Ներքին շերտ խոշորահատիկ ա/բետոնի իրականացում h-6սմ	մ²	1565,0	6,31	9875,15
5	Վերին շերտ մանրահատիկ ա/բետոնի իրականացում h-4սմ	մ²	1565,0	4,68	7324,20

6	Արհեստական անհարթության կառուցում մանրահատիկ տաք ա/բետոնով h=7սմ	տոն	11,82	50,64	598,60
	3.Ընդամենը /հազ. դրամ/				**24249,27**
	3.Ընդամենը(%)			**60,11**	
IV	**Ուղիներ և մուտքեր**				
1	Խճային շերտի պատրաստում h=12սմ հաստությամբ	մ²	284,0	1,77	502,68
2	Բիտումի տարածում 4,12տ/1000մ²	տոն	1,17	314,42	367,90
3	Միաշերտ տաք ա/բետոնե ծածկի իրականացում h-5սմ	մ²	284,0	5,72	1624,48
	4.Ընդամենը /հազ. դրամ/				**2495,06**
	4.Ընդամենը(%)			**6,19**	
V	**Մայթեր**				
1	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	624,0	0,65	405,60
2	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ²	624,0	3,62	2258,88
3	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ	գծմ	404,0	15,66	6326,64
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B20/308գծ. մ/	մ³	6,16	70,27	432,86
	5.Ընդամենը /հազ. դրամ/				**9423,98**
	5.Ընդամենը(%)			**23,36**	
VI	**Թեքուղիներ**				
1	Հարթեցնող շերտ ավազից h=5սմ	մ³	0,80	4,55	3,64
2	Բետոնե հիմքի պատրաստում h=10սմ հաստ.B15 դասի բետոնից	մ³	1,60	60,69	97,10
3	Ցեմենտավազե չոր խառնուրդի պատրաստում 30մմ հաստ. բազալտե սալիկների տակ	մ³	0,48	44,04	21,14
4	Թեքահարթակների երեսապատում բազալտե սալիկներով h=3սմ	մ²	16,0	16	252,80
5	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գմ	52,8	15,66	826,85
	6.Ընդամենը /հազ. դրամ/				**1201,53**
	6.Ընդամենը(%)			**2,98**	
VII	**Ճանապարհի կահավորում**				
1	Նոր նշանների տեղադրում, 12 հատ, այդ թվում՝				
	Նախազգուշական	հատ	2	44,86	89,72
	Առավելության	հատ	2	44,86	89,72
	Արգելող	հատ	2	44,86	89,72
	Հատուկ թելադրանքի	հատ	6	44,86	269,16
2	**Երթևեկելի մասի նշագծում**				
	Երթևեկելի մասի գծանշում հոծ գծով 0.1մ - 1.1	կմ	0,06	112,35	6,74
	Երթևեկելի մասի գծանշում ընդհատուն գծով 1:3 (1.5)	կմ	0,22	54,0	11,66
	Երթևեկելի մասի գծանշում 1.25	մ²	28,80	2,12	61,06
	Երթևեկելի մասի գծանշում 1.14.1	մ²	28,80	2,12	61,06
	7.Ընդամենը /հազ. դրամ/				**678,84**
	7.Ընդամենը(%)			**1,68**	
	Ընդհանուրը ըստ գլուխ 2-ի(հազ.դրամ)*				**40339,8**
	Ընդհանուրը ըստ գլուխ 2-ի(%)			**100,0**	

Ծավալաթերթ - նախահաշիվ/Գլուխ 3/Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գ.Նժդեհ փողոցից դեպի Չարենց փողոցի ասֆալտապատում					
NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը* (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
I	**Քանդման աշխատանքներ**				
1	Գոյություն ունեցող քայքայված ճանապարհային պատվածքի քանդում էքսկավատորով (1,0մ³) և բարձում ա/ինքնաթափի վրա	մ³	88,0	1,04	91,52
2	Տեղափոխում լցակույտ 5,0կմ	տոն	176	0,65	114,40
	1.Ընդամենը /հազ. դրամ/				**205,92**
	1.Ընդամենը(%)			**0,99**	
II	**Հողային աշխատանքներ**				
1	10ե IV գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ	մ³	10,0	0,48	4,80
2	Բնահողի խտացում գլդոնով 25տոն քաշով 6 անցումով 1 հետքի վրայով, ջրումով	մ³	10,0	0,63	6,30
3	Ավելորդ 10եIV գրունտի մշակում և բարձում էքսկավատորով(1,0մ³) ա/ինքնաթափի վրա	մ³	420,0	0,78	327,60
4	Տեղափոխում լցակույտ 5կմ	տոն	819,0	0,65	532,35
5	Հողային պաստառի համահարթեցում գրեյդերով	մ²	1653,0	0,02	33,06
	2.Ընդամենը /հազ. դրամ/				**904,11**
	2.Ընդամենը(%)			**4,33**	
III	**Ծածկի կոնստրուկցիան**				
1	Ավազակոպճային շերտի իրականացում h-10սմ	մ²	1653,0	0,57	942,21
2	Չափազատված խճի շերտի իրականացում h=16սմ հաստությամբ	մ²	1315,0	2,25	2958,75
3	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տոն	5,42	316,08	1712,46
4	Ներքին շերտ խոշորհատիկ ա/բետոնի իրականացում h-6սմ	մ²	1261,0	6,31	7956,91
5	Վերին շերտ մանրահատիկ ա/բետոնի իրականացում h-4սմ	մ²	1261,0	4,68	5901,48
	3.Ընդամենը /հազ. դրամ/				**19471,81**
	3.Ընդամենը(%)			**93,17**	
IV	**Կողնակներ**				
1	III կարգի ցամաքուրդային բնահողի մշակում էքսկավատորով (1,0մ³) բարձելով ա/ինքնաթափի վրա	մ³	57,98	0,56	32,47
2	Բնահողի տեղափոխում մինչև 5,0կմ լիցք	տոն	113,06	0,65	73,49
3	Կողնակների հարթեցում	մ²	223,0	0,02	4,46
4	Բնահողի խտացում գլդոնով 25տ քաշով 6 անցումով 1 հետքի վրայով, բնահողի ջրում	մ³	57,98	0,63	36,53
	4.Ընդամենը /հազ. դրամ/				**146,95**
	4.Ընդամենը(%)			**0,70**	
V	**Ուղիներ և մուտքեր**				
1	Խճային շերտի պատրաստում h=12սմ հաստությամբ	մ²	13,0	1,77	23,01
2	Բիտումի տարածում 4,12տ/1000մ²	տոն	0,05	314,42	16,84

3	Միաշերտ տաք ա/բետոնե ծածկի իրականացում h-5սմ	մ²	13,0	5,72	74,36
	5.Ընդամենը /հազ. դրամ/				**114,21**
	5.Ընդամենը(%)			**0,55**	
VI	**Ճանապարհի կահավորում**				
1	Նոր նշանների տեղադրում, այդ թվում /1 հատ/				
	Առավելության	հատ	1,0	44,86	44,86
2	Երթևեկելի մասի նշագծում				
	Երթևեկելի մասի գծանշում ընդհատված գծով (1:3) 0.10մ-1.5	կմ	0,223	54	12,04
	6.Ընդամենը /հազ. դրամ/				**56,90**
	6.Ընդամենը(%)			**0,27**	
	Ընդհանուրը ըստ գլուխ 3-ի(հազ.դրամ)*				**20899,90**
	Ընդհանուրը ըստ գլուխ 3-ի(%)			**100,0**	

Ծավալաթերթ-նախահաշիվ/Գլուխ 4/Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Սայաթ-Նովա փողոցի դեպի գերեզմանատուն տանող ավտոճանապարհի ասֆալտապատում

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը* (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
I	**Հողային աշխատանքներ**				
1	Ավելորդ 10ե IV գրունտի բարձում էքսկավատորով (1,0մ³) ա/ինքնաթափի վրա	մ³	370	0,78	288,60
2	Տեղափոխում լցակույտ 5.0կմ	տոն	721,5	0,65	468,98
3	Հողային պաստառի համահարթեցում գրեյդերով	մ²	1218,0	0,02	24,36
	1.Ընդամենը /հազ. դրամ/				**781,94**
	1.Ընդամենը(%)			**4,49**	
II	**Ծածկի կոնստրուկցիան**				
1	Ավազակոպճային շերտի իրականացում h-10սմ	մ²	1218,0	0,57	694,26
2	Չափազատված խճային շերտի իրականացում h=16սմ հաստությամբ	մ²	990,0	2,25	2227,50
3	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ²/	տոն	4,08	316,08	1289,23
4	Ներքին շերտ խոշորհատիկ ա/բետոնի իրականացում h-6սմ	մ²	952,0	6,31	6007,12
5	Վերին շերտ մանրահատիկ ա/բետոնի իրականացում h-4սմ	մ²	952,0	4,68	4455,36
	2.Ընդամենը /հազ. դրամ/				**14673,47**
	2.Ընդամենը(%)			**84,30**	
III	**Կողնակներ**				
1	III կարգի ցամաքուրդային բնահողի մշակում էքսկավատորով (1,0մ³) , բարձելով ա/ինքնաթափի վրա	մ³	40,46	0,56	22,65
2	Բնահողի տեղափոխում մինչև 5.0կմ լիցք	տոն	78,9	0,65	51,28
3	Կողնակների հարթեցում	մ²	155,0	0,02	3,10
4	Բնահողի խտացում գլդոնով 25տ քաշով 6 անցումով 1 հետքի վրայով, ջրումով	մ³	40,46	0,63	25,49
	3.Ընդամենը /հազ. դրամ/				**102,52**
	3.Ընդամենը(%)			**0,59**	

IV	**Ուղիներ և մուտքեր**				
1	Խճային շերտի պատրաստում h=12սմ հաստությամբ	մ²	194,0	1,77	343,38
2	Բիտումի տարածում 4,12տ/1000մ²	տոն	0,80	314,42	251,31
3	Միաշերտ տաք ա/բետոնե ծածկի իրականացում h-5սմ	մ²	194,0	5,72	1109,68
	4.Ընդամենը /հազ. դրամ/				**1704,37**
	4.Ընդամենը(%)			**9,79**	
V	**Ճանապարհի կահավորում**				
1	Նոր նշանների տեղադրում, այդ թվում				
	Առավելության	հատ	3,0	44,86	134,58
2	Երթևեկելի մասի նշագծում				
	Երթևեկելի մասի գծանշում ընդհատված գծով (1:3) 0.10մ -1.5	կմ	0,155	54	8,37
	5.Ընդամենը /հազ. դրամ/				**142,95**
	5.Ընդամենը(%)			**0,82**	
	Ընդհանուրը ըստ գլուխ 4-ի(հազ.դրամ)*				**17405,24**
	Ընդհանուրը ըստ գլուխ 4-ի(%)			**100,0**	
	Ընդհանուրը (հազ.դրամ)*				**159897,000**
	Ընդհանուրը(%)			**100,0**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302350021
Հ/Հ 900302000204
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք.Մեղրի,Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09700228

Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 11 » օգոստոսի 2020 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	2020 թվականի դեկտեմբերի 25
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օրվանից	2020 թվականի դեկտեմբերի 25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302350021
Հ/Հ 900302000204
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք.Մեղրի,Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000

ՀՎՀՀ 09700228

Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 11 » օգոստոսի 2020 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	2020 թվականի դեկտեմբերի 25
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օրվանից	2020 թվականի դեկտեմբերի 25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302350021
Հ/Հ 900302000204
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք.Մեղրի,Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000

ՀՎՀՀ 09700228

Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 11 » օգոստոսի 2020 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187	Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ									159897000	159897000	159897000	159897000	159897000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302350021
Հ/Հ 900302000204
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք.Մեղրի,Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016540000

ՀՎՀՀ 09700228

Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ